Նա իսկոյն սրբեց արտասուքը, որ ես չտեսնեմ, դարձաւ դէպ ինձ, ասելով.

— Երդո՛ի՛ր, Ֆարհատ, որ այդ բոլորը, ինչ որ լսեցիր, ինչ որ տեսար այստեղ, կը մնան քեզ մօտ որպէս գաղտնիք:

Ես երդուեցայ:

Այդ անցքից երեք օր յետոյ Զումրուդին թաղեցին: Ամբողջ քաղաքը ցաւեց նրա համար: Նա իբրեւ բժիշկ այնքան բարի էր, որ չկար մի աղքատ, որ նրա օգնութիւնը վայելած չլինէր:

Նրա թաղումից յետոյ Կարօն այլեւս չերեւաց: Կարօյի հետ անյայտացան մեր քաղաքից երեք հոգի — որսորդ Աւօն, Ասլանը եւ Սագօն: Ու՞ր գնացին, — ոչ ոք չգիտեր...

ԺԲ. ՄԹԻՆ ԳԱՂՏՆԻՔ

Դառնանք դէպի մեր պատմութիւնը:

Վաղ առաւօտեան, դեռ արեւը չծագած, ես զարթեցայ: Ես ինձ գտայ խորհրդաւոր մինարեթում, պառկած ցամաք տերեւներից կազմուած անկողնի վրայ: Գլխիս տակին, բարձի փոխարէն, դրած էր մի խուրձ խոտ: Կարօյի վերարկուն ծածկում էր ինձ վերմակի տեղ: Երեւում էր, ընկերներս խնամք էին տարել իմ հանգստութեան համար, որովհետեւ դեռ չէի սովորած բացօթեայ կեանքի խստութիւններին:

Երկու զեյթունցիները չկային: Միւսները՝ Կարօն, Ասլանը, Սագօն — դեռ քնած էին մերկ գետնի վրայ, առանց ծածկոցների: Նրանց քունը ծանր էր եւ խորին: Ինձ երեւում էր, թէ ամբողջ գիշերը արթուն էին մնացած. երեւում էր, հենց նոր դարձել էին մի հեռու տեղից... որովհետեւ նրանց տրեխների ցեխը դեռ թաց էր: Նրանք պառկել էին առանց հանուելու, իրանց հագուստով, մինչեւ անգամ ոտնամաններով: Նրանք կրած ունէին եւ զէնքեր, բայց գիշերը, թէ ընթրիքի ժամանակ, թէ վիճաբանութեան միջոցին, նրանց վրայ զէնքեր չտեսայ, բացի մի-մի դաշոյնից: Ուրեմն նրանք գիշերը այստեղ չէին մնացած, մտածում էի ես, ուրեմն ինձ հարբեցրին, քնացրին, որ չիմանամ, թէ դէպի ո՛ր կողմն են արշաւանք գործում...

Բայց որտե՞ղ կորան այն երկու ծածկամիտ զեյթունցիները, ինչո՞ւ չմնացին այստեղ, ինչո՞ւ Կարօն չծանօթացրեց ինձ նրանց հետ եւ ոչ ասաց, թէ նրանք ովքեր են... Միթէ՞ նա չի հաւատում ինձ: Ահա այդ հարցերը զբա-